Հաստատված է Խաչատուր Աբովյանի
անվան հայկական պետական
մանկավարժական համալսարանի
Գիտական խորհրդի 2013 թվականի
փետրվարի 28-ի նիստում
Ռեկտոր Ռուբեն Միրզախանյան

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՄԱԳԻՍՏՐԱՏՈՒՐԱՅԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ

1. Սույն կանոնակարգը մշակվել է <<Կրթության մասին>>, <<Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին>> ՀՀ օրենքների, ՀՀ կրթության և գիտության նախարարի կողմից հաստատված <<ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատություններում մագիստրատուրայի ընդունելության և ուսուցման կարգ>>-ի, Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի (այսուհետ՝ ՀՊՄՀ) կանոնադրության և այլ իրավական ակտերի հիման վրա:

2. Մագիստրատուրայի ընդունելությունը իրականացվում է 3 փուլով.

3. ***Առաջին փուլով*** մագիստրատուրայի ընդունելությունն ըստ մասնագիտությունների իրականացվում է ՀՀ կառավարության կողմից հաստատված պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար), պարտադիր զինվորական ծառայությունից տարկետման իրավունքով ուսուցման տեղերի:

4. 1-ին փուլով մագիստրատուրայի ընդունելությունն իրականացվում է ընթացիկ տարվա հունիսի 1-ից մինչև հունիսի 10-ը, որին կարող են մասնակցել ՀՊՄՀ բակալավրի կրթական աստիճան ունեցող տվյալ տարվա շրջանավարտները, ովքեր ավարտական աշխատանքի պաշտպանությունից և ամփոփիչ ատեստավորման քննությունից ստացել են բարձր միավորներ:

5. Ընդունելությունը կատարվում է մրցութային կարգով՝ մանդատային հանձնաժողովի երաշխավորության հիման վրա: Հավասար ՄՈԳ-ի պարագայում առաջնահերթության կարգով հաշվի են առնվում հետևյալ լրացուցիչ չափանիշները.

1). գերազանցության դիպլոմի առկայություն,

2). ավարտական աշխատանքի պաշտպանության և ամփոփիչ ատեստավորման քննության միավորների հանրագումարը:

6. ***Երկրորդ փուլով*** մագիստրատուրայի ընդունելությունն իրականացվում է ըստ կրթության պետական կառավարման

լիազորված մարմնի կողմից հաստատված, առանց պարտադիր զինվորական ծառայությունից տարկետման իրավունքի ուսուցման տեղերի:

7. 2-րդ փուլով ուսման վարձի մասնակի զեղչի կիրառման (վճարովի) տեղերի մրցույթին կարող են մասնակցել բուհի նախորդ տարիների բակալավրի, դիպլոմավորված մասնագետի կրթական աստիճան ունեցող դիմորդները, ինչպես նաև այլ բուհերի շրջանավարտները:

8. 2-րդ փուլով մագիստրատուրայի անվճար (պարտադիր զինվորական ծառայությունից զորացրված (ԲՋ) դիմորդների համար նախատեսված տեղերի շրջանակներում) համակարգի մրցույթին մասնակցելու համար կարող են դիմել ՀՊՄՀ տվյալ մասնագիտությամբ բակալավրի կամ դիպլոմավորված մասնագետի կրթական աստիճան ունեցող պարտադիր զինվորական ծառայությունից զորացրված դիմորդները: Ընդունելությունը կատարվում է առանց քննության, մրցութային կարգով՝ նախորդող ուսումնառության դիպլոմի հավելվածում գրանցված առարկաների ՄՈԳ-ի հիման վրա: Ընդունելության վերաբերյալ որոշումը կայացնում է ընդունող հանձնաժողովը՝ մանդատային հանձնաժողովի երաշխավորությամբ:

9. Անվճար համակարգի մրցույթից դուրս մնացած պարտադիր զինվորական ծառայությունից զորացրված դիմորդները վճարովի համակարգ ընդունվում են առանց ընդունելության քննության:

10. 2-րդ փուլով մագիստրատուրայի ընդունելությունն իրականացվում է մինչև ընթացիկ տարվա սեպտեմբերի 1-ը:

11. ***Երրորդ փուլով*** մագիստրատուրայի ընդունելությունն հեռակա ուսուցման համար իրականացվում է մինչև ընթացիկ տարվա սեպտեմբերի 10-ը:

12. Մասնագիտության փոփոխման պարագայում, ՀՊՄՀ կամ այլ ԲՈՒՀ-երի շրջանավարտների ընդունելությունը իրականացվում է միայն վճարովի համակարգում՝ տվյալ մասնագիտության բակալավրիատի ամփոփիչ ատեստավորման ծրագրին համապատասխան անցկացված քննության արդյունքներով: Ընդունելության վերաբերյալ որոշումը կայացնում է ընդունող հանձնաժողովը՝ առարկայական քննական հանձնաժողովների ներկայացրած արձանագրությունների հիման վրա:

13. Օտարերկրյա քաղաքացիները և քաղաքացիություն չունեցող անձինք մագիստրատուրա կարող են ընդունվել միջպետական և միջգերատեսչական պայմանագրերի կամ համաձայնագրերի հիման վրա, լրացուցիչ տեղերի հաշվին, ինչպես նաև վճարովի հիմունքներով սեփական նախաձեռնությամբ:

14. Մագիստրատուրայի վճարովի համակարգ ընդունված դիմորդների հրամանագրումը կատարվում է ուսման վարձը վճարելուց հետո՝ առկա ուսուցման համար մինչև սեպտեմբերի 10-ը, հեռակա ուսուցման համար մինչև սեպտեմբերի 25-ը: